

## Պատասխաններ

### XII-դասարան

1.Նաիրի Զարյանը հայ գրականության ամենահակասական գրողներից է. մի կողմում հախուռն տաղանդ, հայրենասիրություն, սեր, մյուս կողմում՝ մատնություն, հոխորտանք, պոռթկում: «Արա Գեղեցիկ», «Ասք Անդրանիկ գորավարի» :

Հպարտություն և զղջում:

Նշյալ գործերը գրեց, որովհետև կյանքի վերջում գիտակցեց իր գործած կործանարար սխալների հետևանքները , որովհետև մեռած գրողների հոգիները արդարություն էին պահանջում: Ի խորոց սրտի նա ներումն խնդրեց իր ժողովրդից, բոլոր նրանցից, ովքեր այլևս չկային (Չարենց, Բակունց, Թոթովենց):

2.Հովհաննես Շիրազը «անուղղելի» հայրենապաշտ ու Արարատապաշտ էր: Նրա դասերը հրաբուխի նման են ժայթքում. Նա կորսված հայրենիքի նկարագրությունը պահում էր իր աչքերում: Միփանը, Նեմրուքը, Վանա ծովակը շնչում են նրա հոգում, ննջում ու արթնանում նրա հետ, իսկ Արարատը «սրտի հիվանդություն է, ուղեղային մորմոք», անանց ցավ, որի ազատման լուրը պետք է նրան բերեն շշուկով.

«Որ չմեռնեմ խնդությունից՝

Լուրն ինձ բերեք ... շշուկով»

Նա պատգամում է. «Ինձ հոգեհանգիստ կատարեք Մասիսի վրա», և այս է նրա կտակը. «Քեզ Մասիսն եմ կտակում...»:

Բանաստեղծի սիրտը հանգչում է Մասիսի ձյուններում:

3.Մեր գրականության մեծագույն բնապաշտները Մեծարենցն ու Սահյանն են: Նրանց ստեղծագործություններում երևում է մարդու և բնության կապը, բնությունը մարդու գործունեության միջավայրն է, աշխարհը ճանաչելու հիմքը:

Բոլոր բանաստեղծությունների հեղինակը Համո Սահյանն է: Բոլոր բանաստեղծությունների ընդհանուր գաղափարը սերն է:

4.Հեղինակը Պարույր Սևակն է: Բանաստեղծությունը «Մարդը ավի մեջ շարքից է», որտեղ մարդը դիտվում է բոլոր հնարավոր վիճակներում՝ բանաստեղծ ու մտածող, մարդ և մարդկային հարաբերություն:

Սևակը փառաբանում է «մարդուն- հավասար է դարձնում իր ստեղծած Աստծուն»:

Նարեկացին ևս մարդուն բնակեցնում էր Աստծու մեջ և Աստծուն՝ մարդու մեջ:

Նա փառաբանում է զիջումների գնացող, բայց սեփական ինքնությունը չկորցնող մարդուն:

5. Միլվա Կապուտիկյանը իր ճանապարհի կեսին մտորում է հայի տեսակի մասին, մորթվող ու հարություն առնող, զրկվող ու նորից նվաճող հայի մասին , որ աշխարհում վաղուց անտի հաստատել է իր տեղը արարումով, բարությամբ, ներմամբ:

«Քելե , լատ»-ի ծերունին երագում է իր Էրզրի մասին, այնքա՛ն բնական ու ճշմարիտ է այդ երագը, որ «պիտի փլվեն ամեն սահման ու պատնեշ»:

Պետք է խաղաղվի աշխարհը և վերականգնվի պատմական ճշմարտությունը:

Երկու գործերի ընդհանրությունը հայրենասիրությունն է և հավատը:

6. Սարոյանը, որ բարության մունետիկն է ամբողջ աշխարհում, իրեն հայ էր զգում ոգով, ոճով , մտածողությամբ:

Նրա բոլոր հայ հերոսները գալիս են Արևմտյան Հայաստանից՝ Բիթլիսից: Նրա մանկությունը ու պատանեկությունը անցել են հայկական միջավայրում, որոնցից էլ քաղել է շատ տպավորություններ: Անժխտելի է Լուսնթագ տատի պատմությունների դերը նրա ստեղծագործական կյանքում: